



105 Գուսան Ճերամ, քն՝ 79, Երևան 0034, ՀՀ

Հեռ՝ +374 91 40 93 20

Էլ. Հասցե՝ [info@diving.am](mailto:info@diving.am)

Կայք՝ [www.diving.am](http://www.diving.am)

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N° 05/01/19

«ԱրմԴայվինգ սուզորդների ակումբ» հասարակական կազմակերպության  
Խորհրդի նիստի

Կազմված է՝ 05 հունվար, 2019 թ.  
Բաղկացած է 1 (մեկ) էջից

*Քվեարկության ամսաթիվ՝  
Անցկացման ձևաչափ՝*

*հունվար 05, 2019 թ.  
Էլեկտրոնային քվեարկություն*

### Մասնակիցներ և քվորում՝

Նիստին մասնակցել են Կազմակերպության Խորհրդի բոլոր 7 անդամներից 4-ը (Հայկ Բայրամյանը, Արևիկ Հարությունյանը, Դավիթ Սիրունյանը և Գրիգոր Ավետիսյանը), որն էլ ապահովել է անհրաժեշտ քվորում՝ համաձայն «Հասարակական կազմակերպությունների» մասին ՀՀ օրենքի պահանջների:

### Օրակարգ՝

1. «ԱրմԴայվինգ սուզորդների ակումբ»-ի «Ծովից-Ծով Հայաստան» նախագծի մասնակցության համար ավելացնել «ակումբի եկամուտ» գաղափար, որը կգանձվի տվյալ նախագծին մասնակցող բոլոր անդամներից և կծառայի ակումբի նյութական կարիքներին:

### Որոշում հարց 1-ի՝

Խորհրդի նիստին ներկա անդամները միաձայնությամբ դրական արձագանքեցին «ակումբի եկամուտ» գաղափարին և որոշվեց սահմանել 50 ամերիկյան դոլարին համարժեք դրամ որպես վճարի չափ:

Ժողովի նախագահող՝ Տիգրան Ազիզբեկյան

Ժողովի քարտուղար՝ Արևիկ Հարությունյան